



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՏԵԱՆ ԹԵՍԻ  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԻՊԱՏՈՍԻ ՏԵՂԱԿԱԼԸ**

Լու Անձելսը մեջ Լիբանանի հիւպատոսի տեղակալ Ֆատի Յաճալի Երեքշաբթի, 18 Սեպտեմբերին այցելութիւն մը տուաւ Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ: Յանդիպումին ներկայ եղան Կրօնական ժողովի ատենապետ Գերապ. S. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան, Ազգ. Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան եւ փոխ ատենապետ Տոքթ. Յակոբ Տէր Մկրտիչեան:

Առաջնորդ Սրբազնան ու ներկայ Ներկայացուցիչները ողջունեցին Նշանակեալ դիւանագետը եւ բարի երթ մաղթեցին Լու Անձելսի մեջ անոր աշխատանքներուն: Առաջնորդ Սրբազնաը յիշատակեց այս սերտ կապերն ու գործակցութիւնը, որ աւանդութիւն ստեղծած է Ազգ. Առաջնորդարանին ու Լու Անձելսի մեջ նախապես պաշտօնավարող գլխաւոր հիւպատոսներու հետ, որ մաղթելով, որ ան նշանակուի գլխաւոր հիւպատոս՝ Վստահութիւն արտայայտեց, որ նոյն կապերն ու գործակցութիւնը կը շարունակուին անոր պաշտօնավարութեան ընթացքին: Ֆատի Յաճալի շնորհակալութիւն յայտնեց սիրալիր հիւրընկալութեան ու մաղթանքներուն համար:

Յանդիպումը առիթ եղաւ խորհրդակցելու Լիբանանի կացութեան ու իրադարձութեանց ընթացքին մասին: Յիւր դիւանագետը ծանօթութիւններ քաղեց մեր Թեմին, Ազգային Առաջնորդարանին ու անոր հովանիին տակ տարուող հոգեւոր, կրթական եւ ժողովրդանուեր այլ ծառայութիւններու մասին, միաժամանակ ծանօթանալով Ազգային Առաջնորդարանի նոր շնորհ բաժանմունքներուն:

Յրամեշտի պահուս, Առաջնորդ Սրբազնաը լիբանացի դիւանագետին յանձնեց յուշանուերներ:

## **PRELATE MEETS WITH ACTING CONSUL GENERAL OF LEBANON**

On the morning of Tuesday, September 18, the Acting Consul General of Lebanon the Honorable Fady Hajali visited the Prelacy where he was greeted by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, as well as Religious Council Chair Very Rev. Fr. Muron Aznikian, Dr. Garo Agopian, and Dr. Hagop Der Megerdichian, Executive Council Chair and Vice-Chair respectively.

The Prelate and council members welcomed the Acting Consul General and wished him success as he embarks on his new duties. The Prelate expressed his appreciation for the strong partnership that has existed between the Prelacy and the Lebanese Consulate for many years as well as with the previous Consul General, and affirmed that the close relationship will continue during Mr. Hajali's tenure. The Consul General thanked the Prelate for his warm hospitality and kind remarks.

The meeting also offered the opportunity to discuss the current situation in Lebanon and for the Consul General to become more closely familiarized with the endeavors of the Prelacy. The meeting concluded with the Prelate presenting a memento to the Consul General.